— Ինչո՞ւ ձեր միսիոնարների վերաբերութեամբ չէ յաջողւում:

— Ասացի, որ նրանք մեզ նման չեն:

Նա շուտ-շուտ ուղղում էր իր ակնոցները. ես սաստիկ ատում էի այդ գունաւոր ակնոցները, որոնք ծածկել էին նրա աչքերը, եւ ինձ այնպէս էր թւում, որ նա թանձր վարագոյրի ետեւից էր խօսում. ոչինչ չէր երեւում. անկարելի էր նրա աչքերի խորքից թափանցել նրա սրտի խորքը, որը, անտարակոյս, դատարկ պէտք է լինէր:

— Վերջապէս, այն ասացէք, — հարցրեց Ջալլադը, — դուք ի՞նչ ազգային իդեալներ ունէք:

— Մենք ազգ չենք ճանաչում, մենք միայն տիրոջ եկեղեցին ենք ճանաչում, — պատասխանեց նա:

— Դուք ուրեմն եւ հայրենի՞ք չէք ճանաչում:

— Այո՛: Քրիստոնեայի հայրենիքը երկինքն է: Իսկ այդ երկիրը միայն մի ժամանակաւոր իջեւան է, այստեղից այնտեղ տեղափոխուելու համար:

— Չէ՞ որ այդ ժամանակաւոր իջեւանը նոյնպէս բարեկարգելու եւ մեր երջանկութեանը յարմար կացուցանելու շատ պէտքեր ունի:

— Այդ բոլորը աստծոյ ձեռքումն է, մեզանից ոչինչ կախուած չէ: Մենք ի՞նչ կարող ենք անել:

— Եթէ մենք աշխատենք, աստուած եւս մեզ կօգնէ: Աստուած ծոյլերի համար չէ:

— Ամենից առաջ հոգու համար աշխատելու է: Ի՞նչ օգուտ, եթէ աշխարհայինը կշահէնք, իսկ հոգեւորը կը տուժենք:

Ես մտաբերեցի մեր տէր Թոդիկի խրատները: Ի՞նչ զանազանութիւն կար նրա ասածների եւ այդ ապուշի համոզմունքների մէջ: Տէր Թոդիկը նոյնպէս ամէն հոգս աստծոյ վրայ էր ձգում: Քարոզում էր կեանքի պէտքերի մասին հոգ չտանել եւ միայն հոգու համար մտածել:

— Եթէ դուք լինէիք միսիոնարների երկրում, — ասաց Ջալլադը, — եթէ տեսնէիք, մարդիկ այնտեղ ինչպէս են ապրում, ինչպէս են գործում, երբեք այդպէս չէիք խօսի: Բայց միսիոնարները այստեղ գալով, ձեր երկրային ստրկութեան վրայ աւելացնում են եւ հոգեւոր ստրկութիւնը. ձեզ անջատում են աշխարհից, անջատում են համազգի եղբայրներից եւ դարձնում են աւետարանի գերիներ, թէեւ սուրբ աւետարանը ազատութեան եւ եղբայրութեան կտակարանն է:

Նա ոչինչ չպատասխանեց: Մեր հիւրընկալը հարցրեց.